Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

371.5
Ա - 65

# ԱՇԿՈՈՊՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՈՊԻ ՅԵՎ ՅԵՐԲԱՆԿՈՈՊԻ ԿԱԶՄԲԱԺՆԻ

ՅԵՐԵՎԱՆ 1931

F1 3 FEB 2013
49218
0'120-10
33404

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշկոոպների աշխատանքների փորձը ցույց է տալիս, որ մեր մասսայական դպրոցների աշակերտական կոոպերատիվներում ընդգրկված չեն աշակերտության լայն զանգվածները, և մեր դպրոցներում եղած կոոպերատիվներն ի վիճակի չեն եղել ամրացնել կոոպպրոպագանդան դպրոցներում և կազմակերպելու աշակերտությանը կոոպերատիվ սկզբունքներով սպասարկելու գործը։ Մինչև օրս աշկոոպների տնտեսական, կազմակերպչական և գաղափարական աշխատանքներ համապատասխան օրգանների կողմից հարկ եղած ղեկավարություն չեն ստացել։

Աշկոոպների աշխատանքների ներկա դրությունը պահանջում է սպառկոոպերացիայի, լուսավորության և ԼԿՅԵՄ կազմակերպությունների օրգանների սիստեմատիկ ղեկավարություն և համապատասխան միջոցառումներ, աշկոոպների թերությունները վերացնելու համար։

Աշկոոպները բացի երեխաների սպառողական կարիքները բավարարելուց և նրանց նյութական դրությունը թեթևացնելուց, ունեն նաև դաստիարակչական խոշոր նշանակություն։ Դրա համար անհրաժեշտ է լայն բացատրական և կազմակերպչական աշխատանքներ տանել դպրոցներում աշկոոպների աշխատանքները վերակառուցելու, դպրոցականների մեջ լայն չափով տարածելու կոոպերատիվ գաղափարները, կազմակերպելով աշկոոպների լայն ցանցը բոլոր դպրոցներում։ Ելնելով դրանից Լուսժողկոմատը, Հայկոոպը և ԼԿՅԵՄ Կենտկոմը, հրատարակում են աշկոոպների սույն հիմնական կանոնները և հրահանգները՝ աշկոոպի ընդհանուր ժողովի և վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքների մասին։

Անհրաժեշտ է որ կոոպերատիվ, լուսաշխատավորները և ԼԿՅԵՄ կազմակերպությունները ընդհուպ մոտենան աշկոոպների աշխատանքների վերակառուցմանը ըստ այս կանոնադրության և սիստեմատիկ ղեկավարության միջոցով աշկոոպի աշխատանքները գնեն իրենց կոչման բարձրության վրա։

Հ. Ս. Խ. Հ. Լուսժողկոմ՝ Ա. ՅԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Հայկոոպի Վարչության Նախագահ՝ ԱՐ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԼԿՅԵՄ Կենտկոմի Քարտուղար՝ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գրաւեդ. № 6463 (բ). Պատ. № 1748. Տիրաժ 3.000
Պետհրատի տպարան Յերևան.

# ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

*Դպրոցի պոլիտեխնիզացիան, վորպես ինքնուրույն խնդիր, չի կարող լուծվել մեր զարգացման տեմպերին համապատասխան իրական մասշտաբով, նա կարող ե լուծվել, կուսակցության և Լ. Կ. ՅԵ. Մ-ի ղեկավարությամբ, աշխատավոր ամբողջ յերիտասարդության և պատանեկության պրոլետարական շարժման մասսայական և կազմակերպված ինքնագործունեության միջոցով:*

*Հիմնական ճանապարհը դեպի պոլիտեխնիկական դպրոցը հանդիսանում և դպրոցի օրգանական և կուլտուր-արտադրական շաղկապումը արտադրության՝ գործարանի, կոլտնտեսության և խորհտնտեսության հետ:*

*Պոլիտեխնիկական դպրոցի հիմնական գործնական օղակն ե կազմում պատանիների ներգրավումը մեծերի արտադրական աշխատանքներին, արտադրության և գյուղատնտեսության մեջ, նրանց արտադրական աշխատանքի լայն զարգացումը, վորն իր բովանդակությամբ պիտի լինի մեր տնտեսության սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու պլանի իրականացման կոնկրետ և գործնական խնդիրներից:*

*Մեր յերկրի շինարարության, ժողտնտեսության սոցիալիստական սեկտորի ուժեղացման գործում կոոպերացիան հսկայական նշանակություն ունի և դպրոցներն իրենց աշխատանքների ընթացքում չեն կարող զբաղվել կոոպերացիայի խնդիրների հետ:*

*Դպրոցական կոոպերացիան լայն չափերով ընդգրկելով սոցդասավորք մասսայական դպրոցների ուսանողությունը, դպրոցի պոլիտեխնիզացիայի պայմաններում խոշոր դեր պիտի խաղա պատանիներին մեծերի արտադրական աշխատանքներին ներգրավելու գործում, նրանց դպրոցից դուրս գալուց հետո շրջապատի կյանքի մեջ մտնելու ժամանակ:*

## *ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ*

*Մասսայական դպրոցների (1-ին աստիճան և 7-ամյա կոլյերիա) դպրոցական կոոպերացիան գործում ե Լուսժողկոմատի առաջարկած և Ցենտրոսոյուզի հետ համաձայնեցնելով կանոնադրության հիման վրա և իրեն նպատակ ե դնում հետևյալը՝*

ա) Ուսանողության կոոպերացումը, նրանց մեջ կոլեկտիվիստական գաղափարներ և սովորություններ տարածելու, ինքնագործունեությունը զարգացնելու, դպրոցի ներսում և շրջապատի միջավայրում հասարակական աշխատանքներին մասնակցելու և պատանեկության կոոպշինարարության մեջ ընդգրկելու նպատակով.

բ) Պատանեկության մեջ կոոպգաղափարների տարածումը կոոպերացիայի էության և կազմակերպչական կառուցվածքի ուսումնասիրությունը, կոոպաշխատանքների տեխնիկայի և նրա օրգանների ֆունկցիաների հետ ծանոթացնելը, կազմակերպելով աշկոոպի անդամների մեծերի կոոպշինարարությանը մասնակցելու համար։

գ) Օժանդակել դպրոցական կազմակերպություններին, կուլտուր-լուսավորչական ու դաստիարակչական աշխատանքներում և աշխատանքային ու սանիտար-առողջապահական սովորությունների տարածման գործում։

## ԱՇԿՈՈՊԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Աշկոոպի գործնական աշխատանքը պիտի ընթանա հետևյալ ուղղությամբ։

ա) Կազմակերպել պատանիներին կոոպերացիայից գործնական օժանդակություն ցույց տալու համար (նոր անդամներ ներգրավում, կոոպկամպանիաներին մասնակցել, կոոպլուսավորչական աշխատանքների կատարելը և այլն)։

բ) Սպասարկել պատանեկությանն անհրաժեշտ դասագրքեր, գրենական ու կենցաղային պիտույքներ հայթայթելու միջոցով, սպասարկելով առաջին հերթին բանվորների, բատրակների, չքավորների և անապահով ընտանիքների զավակներին։

գ) Կազմակերպել և տանել կոոպլուսավորչական աշխատանքներ սովորողների և չսովորողների մեջ (կոոպխմբակներ, զրույցներ, ընթերցումներ և այլն)։

դ) Կազմակերպել փոխօգնության դրամարկղներ նյութապես անապահով աշխատավորների երեխաներին օգնելու համար։

ե) Դպրոցում կազմակերպել արտադրական արհեստանոցներ։

## ԱՇԿՈՈՊԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

1) Աշկոոպը կազմակերպվում է դպխորհրդի և ինքնավարության կողմից ու կցվում է մեծերի մերձական կոոպին։

Աշկոոպի կանոնադրությունը հաստատվում է դպխորհրդի, կոոպվարչության, Հ. Լ. Կ. ՅԵ. Մ.-ի և պիոներ բյուրոյի կողմից։



2) Աշկոոպերատիվն աշխատում է դպխորհրդի, Հ. Լ. Կ. ՅԵ. Մ. բջիջի ղեկավարությամբ և մեծերի կոոպերատիվի վարչության հսկողությամբ ու օժանդակությամբ։

3) Կոոպերատիվի անդամ կարող են լինել տվյալ դպրոցի բոլոր ուսանողները և տվյալ ռայոնի աշխատավոր ընտանիքների մինչև 18 տարին հասած զավակները, վորոնք սպառկոոպի անդամ չեն։ Անդամակցությունը պետք է լինի կամավոր հիմունքներով, ըստ վորում յուրաքանչյուր անդամ իր դիմումի համաձայն կարող է դուրս գալ կոոպերատիվի անդամությունից։

Կոոպերատիվի անդամներն իրավունք ունեն ընտրելու և ընտրվելու կոոպի բոլոր մարմիններում։

4) Աշկոոպն ընտրում է վարչություն 7—9 անդամով և 2 թեկնածույով, վերստուգիչ հանձնաժողով 5 անդամով և 2 թեկնածույով—վեց ամիս ժամանակով։

Վերընտրությունների ժամանակ նոր կազմի մեջ անհրաժեշտ է անցկացնել նախորդ կազմի 1/3-ից վոչ ավելի քանակով անդամներ։ Աշկոոպի վարչությունը հաշվետու յե կոոպի անդամների ընդհանուր ժողովի, դպրոցական ինքնավարության և խորհրդի Լ. Կ. ՅԵ. Մ. բջիջի և պիոներական բյուրոյի առաջ։

Վարչությունը և վերստուգիչ հանձնաժողովը աշխատում են նրանց համար մշակված հատուկ հրահանգով։

ԾԱՆՈԹ.— Մեծ դպրոցներում կոոպանդամների ընդհանուր ժողովին փոխարինում է լիազորների ժողովը։

Խմբակների ժողովներում ընտրվում են յուրաքանչյուր տասը ուսանողից մեկական լիազորներ և ընտրված լիազորներից հրավիրվում է լիազորական ժողով։

5) Յուրաքանչյուր կոոպերատիվին անդամագրվողը պարտավոր է մուծել մուտքի վճար 10 կ. և փայավճար հետևյալ չափով։

Բանվորների և ծառայողների զավակները, վորոնց ծնողները ստանում են աշխատավարձ մինչև 40 ռ. . . . . . . 20 կ.
Վորոնց ծնողները ստանում են աշխատավարձ մինչև 80 ռ. . 30 կ.
» » « » » 150 ռ. . 50 կ.
Բարձր . . . . . . . . . . . . . . . . . . . . . 1ռ. 50 կ.

Տնտեսության մեջ միակ աշխատավոր ունեցող գյուղացիների զավակները (կոլտնտեսականների, խորհտնտեսականների) փայավճարների մուծման խնդրում հավասարեցվում են բանվոր-ծառայողների զավակներին։ Փայավճարները սահմանելիս պիտի յելնել հետևյալ նորմաներից՝

Գյուղխորհրդից ազատված գյուղացիների զավակները մտցնում են . . . . . . . . . . . . . . . . . . 20 կ.
Ընդհանուր հիմունքներով միասնակ վճարողների զավակները 30 կ.
Անհատական կարգով հարկացրվածների զավակները . . 50 կ.
Ունևորների զավակները . . . . . . . . . . . . . . 1 ռ.

4) Փայավճարների մուծման ժամկետների հետաձգումը վորոշում է ընդհանուր ժողովը։

5) Կոոպերատիվ անդամությունից դուրս գալու դեպքում փայավճարը վերադարձվում է տնտեսական-գործառնական (ոպերատիվ) տարվա վերջին։

## ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշկոոպի բոլոր անդամները պարտավոր են յենթարկվել կանոնադրության պահանջներին ընդհանուր ժողովի և վարչության վորոշումներին, կանոնավոր կերպով կատարել վերոհիշյալ մարմինների կողմից իրենց վրա դրված պարտականությունները։

Այն դեպքում, յերբ անդամներից վորևե մեկը չի կատարում վերև նշված պարտականությունները, ապա պիտի յենթադրել, վոր կոոպ-ի անդամը ցանկություն չունի ոժանդակել կոոպի առաջ դրված խնդիրների և նպատակների իրագործմանը, վորի հետևանքով նման անձնավորությունը կարող է հեռացվել անդամությունից փայատերերի ընդհանուր ժողովի վորոշմամբ։

## ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1 Աշկոոպի միջոցները կազմվում են հետևյալ կապիտալներից՝

ա) Հիմնական՝ վոր կազմվում է մուտքի վճարներից, ոգուտների մասհանումներից և նախատեսված է գույք ձեռք բերելու և ծախսերը ծածկելու համար։

բ) Փայատիրական՝ վոր կազմվում է անդամակցական փայավճարներից և նախատեսված է ընթացիկ գործառնությունները կատարելու համար։

գ) Պահեստի՝ վոր կազմվում է տարեկան ոգուտների մասհանումներից և նախատեսված է ծածկելու համար այն ծախսերը, վորոնք կարող են յերևան գալ տարեվերջի հաշվետվության ժամանակ։

դ) Հատուկ կապիտալից և ֆոնդերից, վորոնք կազմվում են ոգուտների մասհանումից, կվճարվի ներկայացուցիչների ու դասախոսությունների յեկամուտներից և ծախսվում են աշկոոպի անդամների ընդհանուր ժողովների վորոշմամբ հանրօգուտ կուլտուր-լուսավորական նպատակների համար։



2. Կոոպի տարեկան ոգուտը բաշխվում է հետևյալ ձևով՝

20 %-ը հատկացվում է հիմնական կապիտալին։

10 %-ը պահեստի կապիտալին, 30 %-ը ուսանողական փոխօգնության ֆոնդին, իսկ մնացածը՝ հատուկ կապիտալին։

3. Կոոպի գործառնական տարին պիտի համապատասխանի դպրոցի ուսումնական տարվան։ Կոոպի հաշվառումն ու հաշվետվությունը կատարվում է Ցենտրոսոյուզի սահմանած ձևերով։

## ԱՇԿՈՈՊԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՈՊԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

1. Աշկոոպն իրավական անձի իրավունք չի վայելում։ Կոոպի պաշտոնական բոլոր փոխհարաբերությունները զանազան հիմնարկների, կազմակերպությունների, ձեռնարկությունների և անձանց հետ, բացառությամբ կոոպի անդամների, կատարվում են կոոպի ղեկավար մարմինների նախաձեռնությամբ դպրոցական ինքնավարության միջոցով։

2. Կոոպն իր գործունեության ընթացքում կապվում է տեղական սպառողական ընկերությունների հետ դպրոցական ինքնավարության և խորհրդի կողմից, վերոհիշյալ ընկերությունների հետ կնքած գրավոր համաձայնության միջոցով։

Այդ համաձայնության մեջ պետք է նախատեսված լինի հետևյալը։

ա) Կոոպին ապրանքներ մատակարարելու կարգը։

բ) » վարկավորելու և հաշվարկման »։

գ) Հետազոտական և հրահանգչական ոժանդակության կարգը։

դ) Սպառողական ընկերությունների աշկոոպի ծախսերը ծածկելու մեջ ունենալիք մասնակցության չափը։

## ԱՇԿՈՈՊԻ ՌԵԳԻՍՏՐԱՑԻԱՆ (ՏՈՄԱՐԱԳՐՈՒՄՆ) ՅԵՎ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ

1) Աշկոոպի կանոնադրությունը ստորագրված 10-ը հիմնադիրների կողմից և համաձայնեցված տեղական սպառողական ընկերության և դպրոցական խորհրդի հետ, տոմարագրված է լուսավորության, սպառընկերության մարմիններում և Հ. Լ. Կ. Յե. Մ. շրջբյուրոյում։

2) Աշկոոպի լիկվիդացիան կարող է տեղի ունենալ անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ և այն դեպքում, յերբ կոոպի անդամների թիվը տասից պակաս է։ Լիկվիդացիոն հանձնաժողովը ընտրվում է ուսանողության ընդհանուր ժողովում։

Լիկվիդացիոն հանձնաժողովի կազմի մեջ անդամության իրավունքով մտնում են դպրոցի դիրեկտորի, ԼԿՅԸՄ-ի, կոոպերատիվի և պրոֆբյուրոյի ներկայացուցիչները։

3) Լիկվիդացիայի դեպքում աշկոոպի գույքից վճարվում են պարտքերը, վերադարձվում են փայավճարները, իսկ մնացած գույքը հանձնվում է այն դպրոցին, վորին կից կազմակերպված եր կոոպերատիվը։

## ՀՐԱՀԱՆԳ

### ԱՇԿՈՈՊԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովը ղեկավարվում է աշխկոոպի կանոնադրությամբ։

1) Ընդհանուր ժողովի իրավասությանը յենթակա յեն հետևյալ հարցերը՝

ա) Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի նախահաշիվների, հաշվետվությունների և աշխատանքի ծրագրի քննելն ու հաստատելը։

բ) Մաքուր օգուտի բաշխելն ու հատուկ կապիտալների ծախսելը.

գ) Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամների և թեկնածուների ընտրությունն ու ժամանակից շուտ հետ կանչելը։

դ) Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի վրա գըրված բողոքների քննելը.

ե) Աշկոոպի վոչ անդամ ուսանողներին ապրանքներ բաց թողնելու պայմանների վորոշելը։

զ) Փայավճարները մուծելու ժամկետների վորոշելը։

է) Կոոպերատիվի գործունեությունը դադարեցնելու, ինչպես և կոոպերատիվի գործունեությունից բղխող այլ հարցերի վորոշելը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն դպրոցներում վորտեղ գոյություն ունի լիազորների ժողով, բոլոր այս հարցերը վորոշում է վերջինս։



2) Ընդհանուր ժողովը հրավիրում է կոոպերատիվի վարչությունը կարիք յեղած դեպքում, բայց վոչ ուշ, քան յերկու ամիսը մեկ անգամ, նաև լուսավորության ու սպառկոոպերացիայի տեղական մարմինների, վերստուգիչ հանձնաժողովի և կոոպերատիվի անդամների $1/_{3}$-ի պահանջմամբ և օրինական է համարվում, յեթե ժողովին ներկա են կոոպերատիվի անդամների կեսը։

3) Վարչությունը վաղօրոք հայտնում է կոոպերատիվի անդամներին ընդհանուր ժողովի տեղի, ժամանակի ու քննության առնվելիք հարցերի մասին և ընդհանուր ժողովը կարող է քննության առնել միայն այն հարցերը, վորոնք նշված են տրված հայտարարության մեջ։

Ընդհանուր ժողովը բացում է վարչության նախագահը կամ նրա փոխարինող վարչության անդամը, վորից հետո ընտրվում է ժողովի նախագահություն հետևյալ կազմով՝ մեկ նախագահ, յերկու անդամ և քարտուղար արձանագրություն կազմելու համար։

4) Ընդհանուր ժողովի քննության առնելիք հարցերը ներկայացվում են ընդհանուր ժողովին միմիայն վարչության միջոցով։

5) Ընդհանուր ժողովի արձանագրությունները պահվում են կոոպերատիվի վարչության գործերում։

## ՀՐԱՀԱՆԳ

### ԱՇԿՈՈՊԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Աշկոոպի վարչությունն ու վերստուգիչ հանձնաժողովը ղեկավարվում են կոոպերատիվի կանոնադրությամբ, կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովի վորոշումներով և կանոնադրության մասին տրված հրահանգներով։

**Վարչության իրավունքներն ու պարտականությունները**

1) Վարչության պարտականություններն են՝

ա) Կոոպերատիվի նոր անդամների ընդունելությունը.

բ) Առևտրական և արտադրական ձեռնարկումների կազմակերպելն ու ղեկավարելը։

գ) Կոոպերատիվի գույքի և ապրանքների պահպանելը, գնելն ու վաճառելը։

դ) Դրամական գումարների ընդունելն ու հանձնելը և նրանց պահպանելը։

բ) Կոոպերատիվի անդամների և ընդհանրապես ուսանողների մեջ կոոպերատիվ-լուսավորական աշխատանքներ տանելը, դասախոսություններ, զեկուցումներ, կոոպերատիվ խմբակներ կազմակերպելու միջոցով։

գ) Կոոպերատիվի անդամներին մոտակա բանվորական կամ գյուղական կոոպերատիվի աշխատանքներին պարտադիր կերպով մասնակից դարձնելու նպատակով, հիշյալ կոոպերատիվներից մեկի հետ տևական ու մոտիկից կապ պահպանելը։

դ) Մասնակցել ընդհանուր դպրոցական աշխատանքներին, շաղկապել իր աշխատանքները վերջինիս հետ և ուժերի ներածին չափով նյութական օգնություն ցույց տալ՝ գրադարաններ, ընթերցարաններ, ակումբներ, գաղութներ կազմակերպելու, ընդարձակելու և այլն միջոցներով։

ե) Գործավարության և հաշվետվության տանելը, ներքին կարգապահության կանոններ մշակելը, մուտք և ելքի նախահաշիվների, վեցամսյա և տարեկան հաշվետվությունների կազմելն ու կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովին ի հաստատություն ներկայացնելը։

զ) Ընդհանուր ժողովի նախապատրաստելն ու հրավիրելը և վերջինիս որոշումները կյանքում իրագործելը։

է) Աշկոոպերատիվի կողմից ներկայացուցչությունը և աշխատանքի ընթացքում ծագող այլ պարտականությունների կատարելը։

ը) Ուսանողների սննդի կազմակերպելը (սառը և տաք նախաճաշեր, թեյ և այլն)։

2) Վարչության նիստերը հրավիրվում են յերկու շաբաթը մեկ անգամ և համարվում են կայացած, յեթե ներկա են վարչության բոլոր անդամներից ոչ պակաս, քան կեսը։

3) Վարչության կազմակերպչական առաջին նիստում ընտրվում է վարչության նախագահ, փոխ-նախագահ, կոոպերատիվ լուսավորական աշխատանքների ղեկավար, առևտրական մասի վարիչ, քարտուղար, հաշվետար, գանձապահ, արտադրական մասի վարիչ և սրանցից ամեն մեկը պատասխանատու է իրեն հանձնված աշխատանքի համար։

4) Յեթե վարչության անդամներից որևէ մեկը, առանց հարգելի պատճառների, յերեք անգամ անընդհատ չի հաճախում վարչության նիստերին, նա համարվում է վարչության կազմից դուրս յեկած։ Նրա տեղն անցնում է վարչության անդամության



համար ընտրված այն թեկնածուն, որը մյուս թեկնածուների հետ համեմատած ավելի շատ ձայն է ստացել, և տանում է այն աշխատանքները որ կատարում եր վարչության կազմից դուրս յեկած անդամը։

5) Վարչության նիստերում հարցերը որոշվում են ձայների մեծամասնությամբ։

6) Վարչության բոլոր որոշումները արձանագրվում են քարտուղարի կողմից տարվող «Վարչության նիստերի արձանագրությունների» հատուկ գրքում։

Վարչության այս կամ այն հարցի մասին որոշումները կարող են վերանայվել վարչության կողմից, յեթե այդ մասին հարց բարձրացնեն վարչության անդամներից որևէ մեկը կամ դպրոցական և կոոպերատիվ կազմակերպությունները։

7) Վարչության որևէ անդամի կողմից իր աշխատանքները վարչության մի ուրիշ անդամի հանձնելու առթիվ, պետք է կազմվի հատուկ արձանագրություն գործերը հանձնելու և ընդունելու մասին։

8) Վարչությունը, որի անդամները չեն կարող մտնել վերստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ, պարտավոր է վերստուգիչ հանձնաժողովի առաջին իսկ պահանջին ներկայացնել կոոպերատիվի հաշվետվությունն ու գործավարությունը վերանայելու համար։

9) Վարչությունը յերբ անհրաժեշտ է գտնում իր նիստերը հրավիրում է վերստուգիչ հանձնաժողովի հետ միասին։ Վարչությունն իր նիստերում լսում է հաշվետու զեկուցումներ, թե վարչության անդամներին տրված հանձնարարությունների և թե կոոպերատիվի որևէ մարմնում աշխատող կոոպի առանձին անդամների աշխատանքների մասին, ստուգում է կատարած աշխատանքները և որոշ հունի մեջ է դնում այն։

10) Վարչության նիստերի արձանագրությունները, հաշվետվությունները և նախահաշիվները ստորագրում են վարչության բոլոր անդամները։

## ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Վերստուգիչ հանձնաժողովի պարտականություններն են՝

ա) Դրամարկղի, գույքի, փաստաթղթերի և հաշվետվությունները պարբերաբար ստուգելը.

բ) Վարչության վեցամսյա և տարեկան հաշվետվությունների մասին եզրակացություններ տալը.

գ) Վարչության գործողությունների դեմ տրված բողոքների առթիվ եզրակացություններ տալը.

դ) Ընդհանուր ժողովին իր գործունեության մասին հաշվետվություն ներկայացնելը:

2. Վարչության աշխատանքների ստուգումը կատարվում է վերստուգիչ հանձնաժողովի վորոշած ժամկետներին, բայց վոչ շուտ, քան երեք ամիսը մեկ անգամ:

3. Վերստուգիչ հանձնաժողովի անդամները ընտրվում են վարչության և կոոպերատիվի այլ օրգանների մեջ չընտրված կոոպերատիվի անդամներից:

4. Վերստուգիչ հանձնաժողովի առաջին կազմակերպչական նիստում ընտրվում է վերստուգիչ հանձնաժողովի նախագահ, քարտուղար և բաժանվում է աշխատանքը մյուս անդամների միջև:

## ՀՐԱՀԱՆԳ

## ԱՇԿՈՊԻ, ԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ԼԿՅԵՄ ՈՒ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿՈԼԼԵԿՏԻՎՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.

Աշկոպների աշխատանքները պետք է շաղկապված լինեն դպրոցական ինքնավարության վողջ աշխատանքների հետ, վորն իրականացնելու համար աշկոպները իրենց ներկայացուցիչները պիտի ունենան դպրոցական ինքնավարության բարձր մարմիններում, կուլտկոմիսսիայում և խմբկոլում:

Ամեն տրիմեստրի վերջին ուսկոմի ժողովում պետք է զեկուցում դնել կատարված աշխատանքների և հաջորդ տրիմեստրում կատարելիք աշխատանքների ծրագրի մասին:

Աշկոպը ուսկոմի հետ միասին պետք է ակտիվ կերպով մասնակցի դպրոցի կողմից տարված հասարակական-քաղաքական կամպանիաներին, ծնողների և բնակչության առաջ կազմակերպվող երեկույթներին, դպրոցական ցուցահանդեսների կազմակերպման, թերթերի և տեղեկագրի հրատարակման աշխատանքներին և այլն:

2

Դպրոցական խորհուրդը պետք է ամենաակտիվ մասնակցություն ունենա աշկոպների կազմակերպման և հետագա աշխատանքների մեջ:



Աշկոպի առորյա աշխատանքները ղեկավարելու համար դպրոցական խորհուրդը պիտի ընտրի մեկ մանկավարժի, վորը 1-ին աստիճանի դպրոցներում ղեկավարում է աշկոպի աշխատանքները և ուսանողությանն սովորեցնում է ինքնուրույն և ակտիվ կերպով հասարակական աշխատանքներին մասնակցել: 7-ամյա դպրոցներում կոոպերատիվը ղեկավարում են վարչությունը և վերստուգիչ հանձնաժողովը, իսկ մանկավարժը լինելու է խորհրդատուի դերում:

Աշկոպների աշխատանքներին մասնակցելու համար դպրոցական խորհուրդը և աջակցող խորհուրդը պետք է տան իրենց ներկայացուցիչները, վորոնք աշխատելու են կցված ներկայացուցչի ղեկավարությամբ:

3.

Դպրոցում կոմյերիտական և պիոներական կոլլեկտիվները ակտիվ կերպով պիտի մասնակցեն աշկոպների կազմակերպման աշխատանքներին, իրենց նախաձեռնությունը հայտնաբերելու միջոցով լավագույն ակտիվիստներին պետք է անցկացնեն աշկոպի ղեկավար օրգանների մեջ: Կոլլեկտիվները պիտի հետևեն, վորպեսզի աշկոպի աշխատանքները շաղկապվեն դպրոցի վողջ հասարակական-քաղաքական աշխատանքների հետ, միջոցներ պիտի ձեռք առնեն բոլոր ուսանողներին, մանավանդ բանվորների, բատրակների ու չքավորների զավակներին կոոպերատիվում ընդգրկելու համար:

Կոմյերիտական ու պիոներական կոլլեկտիվները պետք է լսեն աշկոպներում աշխատող իրենց կոլլեկտիվի անդամների և աշկոպի ղեկավար մարմինների զեկուցումները աշկոպի աշխատանքների մասին և այդ միջոցով վերացնեն վերջինիս աշխատանքների բացերը:

ՀՀ Ազգային գրադարան
NL0229734

49.218